Հավելված
Հաստատված է Հայաստանի
Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի 2016 թվականի
սեպտեմբերի 28-ի N269Լ որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ …….....….3

1. Իրավական ոլորտի բարեփոխումներ և իրավական գործառույթներ …….....…4

2. Սակագնային քաղաքականություն …….....…...8

3. Լիցենզավորում ……...…….....…10

4. Սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված աշխատանքներ ……..…….....12

4.1 Սպառողների սպասարկման որակի ցուցանիշների մոնիթորինգ 12

4.1.1 Էներգետիկայի բնագավառ 15

4.1.2 Ջրային ոլորտ …….....16

4.2 Սպառողների դիմումների քննարկում 17

5. Կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերի համաձայնեցում և գնումների մոնիթորինգ …….....…...19

6. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն…….....…..23

7. Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառ…….....…….....…….....…....24

8. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության, թափանցիկության ապահովումը և համագործակցությունը զանգվածային լրատվության միջոցների ու հասարակական կազմակերպությունների հետ…….....…26

9. Համագործակցությունը միջազգային կառույցների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կարգավորող մարմնի հետ.....……....……...28

10. Հանձնաժողովի կողմից բյուջետային մուտքերի ապահովումը .....…….....…….29

11. Հանձնաժողովի 2017 թվականի պահպանման ծախսերի նախահաշիվը …….....…….29

12. Հանձնաժողովի 2017 թվականի գործունեության ծրագրի հանրային քննարկումը…….....…….30

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) էներգետիկայի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման մասով), երկաթուղային տրանսպորտի (ենթակառուցվածքի օգտագործման վճարի սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառներում և ջրային ոլորտում կարգավորող մարմին է, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներն են.

- սակագնային քաղաքականության վարչություն
- ֆինանսական վերլուծության վարչություն
- իրավաբանական և լիցենզավորման վարչություն՝
  - իրավաբանական և դատական սպասարկման բաժին
  - լիցենզավորման բաժին
- զարգացման և մոնիթորինգի վարչություն՝
  - տնտեսագիտական բաժին
  - տեխնիկական բաժին
- հեռահաղորդակցության վարչություն՝
  - կարգավորման քաղաքականության բաժին
  - ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժին
- ներքին աուդիտի բաժին
- միջազգային համագործակցության բաժին

- դիմում-բողոքների քննարկման և նիստերի նախապատրաստման բաժին
- գնումների բաժին
- տնտեսական բաժին
- անձնակազմի կառավարման բաժին
- հաշվապահական հաշվառման և սոցիալական ծրագրերի իրականացման բաժին
- ընդհանուր բաժին

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքները համակարգում են հանձնաժողովի անդամները և աշխատակազմի ղեկավարը՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն:

1. Իրավական ոլորտի բարեփոխումներ և իրավական գործառույթներ

Կարգավորվող ոլորտների իրավական դաշտի կատարելագործումը՝ որպես պարբերական գործընթաց, հանձնաժողովի կարևորագույն գործառույթներից մեկն է:

Հանձնաժողովը 2017 թվականի ընթացքում շարունակելու է հետամուտ լինել կարգավորվող ոլորտներին վերաբերող իրավական ակտերի լրամշակման և կատարելագործման աշխատանքներին, ինչպես նաև կարգավորման խնդիրների լուծմանը նպաստող ծրագրերի մշակմանը և իրագործմանը: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ կատարված փոփոխությունների հիման վրա հանձնաժողովը կնախաձեռնի «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի լրամշակումը, որի շրջանակում նախատեսվում է օրենքով ամրագրված՝ հանձնաժողովի անդամների նշանակման ընթացակարգի համապատասխանեցումը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, ինչպես նաև Ասիական զարգացման բանկի «Կարգավորման անկախության բարձրացում» հաշվետվության հիման վրա մշակված՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման անկախության բարձրացմանն ուղղված իրավական

գործողությունների ծրագրին: Առաջարկվող փոփոխությունները հիմնականում կվերաբերեն հանձնաժողովի անկախության բարձրացմանը՝ միտված նրա ֆինանսավորման, հաշվետվողականության, հանձնաժողովի անդամների նշանակման նոր պահանջների ամրագրման, կառուցվածքային բարեփոխումների և սպառողներին առնչվող հարցերում նրանց առավել ակտիվ մասնակցության ապահովման խնդիրներին: Նշված գործընթացին կհետևի այլ օրենքներում փոփոխությունների կատարումը, ինչից հետո անհրաժեշտաբար փոփոխություններ կկատարվեն նաև հանձնաժողովի համապատասխան իրավական ակտերում:

Կարևորելով էլեկտրաէներգետիկական համակարգի շուկայի աստիճանական ազատականացման, միջպետական առևտրի խթանման անհրաժեշտությունը և հաշվի առնելով միջազգային կառույցների առաջարկությունները, 2017 թվականի ընթացքում նախատեսվում է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության հետ համատեղ վերանայել «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ ներդնելով էլեկտրաէներգետիկական շուկայի առավել արդյունավետ աշխատանքին ուղղված կարգավորման նոր գործիքներ: Նշված գործընթացի շրջանակում նախատեսված միջոցառումներն ամրագրված են նաև Ասիական զարգացման բանկի «Ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագիր - փուլ 2»-ի քաղաքականության աղյուսակում: Ուստի, էլեկտրաէներգետիկական շուկայի իրավակարգավորումներում նախատեսվող բարեփոխումները, միջազգային առաջավոր փորձին համապատասխան, միտված կլինեն ներքին շուկայի սպառողների և կարգավորվող անձանց շահերի հավասարակշռման, սակագների կառուցվածքի բարելավման, արտադրության, սպառման շուկաներում պատասխանատվության միջոցների ներդրման և համակարգում առկա այլ խնդիրների առաջադեմ և արդյունավետ լուծման ապահովմանը:

Այդ ուղղությամբ արդեն իսկ կատարվել են որոշակի աշխատանքներ, մասնավորապես, մշակվել և ընդունվել են էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման (բաշխող-սպառող (որակավորված սպառող)), ինչպես նաև հաշվեկշռման ծառայության մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերը,

էլեկտրաէներգետիկական համակարգում հաղորդման և բաշխման ցանցեր երրորդ անձի մուտքի իրավունքի տրամադրման անցումային կանոնները և էլեկտրաէներգետիկական շուկայի կատարելագործման և կարգավորման նոր գործիքների ներդրման հայեցակարգը:

Միաժամանակ, հանձնաժողովը ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության հետ համատեղ ինտենսիվորեն մասնակցում է էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոնների մշակման աշխատանքներին, որի շրջանակում նախատեսվում է մեկ միասնական փաստաթղթում համախմբել էլեկտրաէներգետիկական համակարգի պլանավորման, կարգավարման ու շուկայի մասնակիցների միջև տեխնիկական բնույթի փոխհարաբերությունները կանոնակարգող իրավադրույթները՝ համապատասխանեցնելով դրանք միջազգային առաջավոր փորձին:

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի՝ 2016 թվականի հունվարի 22-ից ուժի մեջ մտած փոփոխությունների համաձայն՝ հանձնաժողովը պարտավոր է մեկ տարվա ընթացքում իր իրավական ակտերը համապատասխանեցնել նշված փոփոխություններին: Ըստ այդմ, հանձնաժողովը մշակել է ջրային ոլորտում գործունեության լիցենզավորման կարգի, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերի, ինչպես նաև խմելու ջրի մատակարարման և օգտագործման կանոնների նախագծերը, որոնք գտնվում են հանրային քննարկումների փուլում և գործողության մեջ կմտնեն 2017 թվականից:

2016 թվականի ընթացքում հանձնաժողովն ակտիվորեն մասնակցել է Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծի ուսումնասիրությանը, դրա առնչությամբ անցկացված քննարկումներին, ինչպես նաև իր իրավասություններին առնչվող դրույթների մշակման աշխատանքներին: 2017 թվականին նշված նախագծի ընդունումից և ուժի մեջ մտնելուց հետո հանձնաժողովը ձեռնամուխ կլինի հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում իրավախախտ անձանց նկատմամբ նշված օրենսգրքի

պահանջներին համապատասխան պատասխանատվության միջոցների կիրառման և, անհրաժեշտության դեպքում, օրենսդրական փոփոխություններից բխող իր իրավական ակտերի վերանայման գործընթացին:

Սկսվել են նաև Եվրամիություն-Հայաստանի Հանրապետություն նոր շրջանակային համաձայնագրի ձևավորման աշխատանքները, որոնց շրջանակում նախատեսվում է նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այդ թվում՝ էներգետիկայի բնագավառի համապատասխանեցումը Եվրամիության օրենսդրությանը:

2017 թվականին հանձնաժողովը կշարունակի մեծածավալ աշխատանքներ տանել Եվրասիական տնտեսական միության և Եվրոպական Միության հետ՝ հանրային ծառայությունների ոլորտների կարգավորմանն առնչվող տարբեր ուղղություններով, այդ թվում՝ ոլորտները կարգավորող իրավական ակտերը վերոնշյալ կառույցների իրավակակարգավորման դաշտին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Հանձնաժողովի կարգավորման տիրույթում գտնվող ոլորտների լիցենզավորման կարգերի պարբերաբար լրամշակումը մշտապես հանձնաժողովի ուշադրության կենտրոնում է, ինչը կշարունակվի նաև 2017 թվականին: Ելնելով իրավակիրառ պրակտիկայում ծագած հարցերի լուծման անհրաժեշտությունից՝ նախատեսվում է փոփոխություններ կատարել նաև լիցենզավորմանը վերաբերող իրավական ակտերում, ինչը կնպաստի համապատասխան ոլորտներում լիցենզավորման գործընթացի բարելավմանը և հստակեցմանը: Մասնավորապես, նախատեսվում է հանձնաժողովի 2013 թվականի համապատասխան որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգում հստակեցնել լիցենզիա ստացած անձանց պարտավորությունները կայանի կառուցման ժամանակահատվածում, լիցենզիայի գործողության դադարեցման դեպքերը և այլն:

Հանձնաժողովը հետևողականորեն շարունակելու է իր ընդունած իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը, խախտման դեպքերի վերհանումը և իրավախախտ կարգավորվող անձանց նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառումը, իսկ իրավական ակտերի պահանջների չկատարման դեպքում դրանց դատական կամ հարկադիր կարգով

կատարման ապահովումը:

Հանձնաժողովն իր գործառույթների սահմաններում 2017 թվականին մասնակցություն կցուցաբերի պետական այլ մարմինների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի հետ համագործակցության և փոխօգնության գործընթացներին, ինչը բխում է նաև Ասիական զարգացման բանկի «Կարգավորման անկախության բարձրացում» հաշվետվությամբ ներկայացված առաջարկներից:

2. Սակագնային քաղաքականություն

Սակագնային կարգավորումը հիմնվում է համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքի վրա և նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը:

Հանձնաժողովը 2017 թվականի ընթացքում ևս հետևողականություն կդրսևորի իրականացվող սակագնային քաղաքականության կատարելագործման աշխատանքներում: Սակագների գործող կառուցվածքի հետագա կատարելագործումը հանձնաժողովի առաջնահերթ խնդիրներից է, քանի որ սակագների կառուցվածքի միջոցով կարելի է նոր ազդակներ հաղորդել համակարգի զարգացմանը: Մասնավորապես, 2017 թվականին տեղական և միջազգային խորհրդատուների ներգրավմամբ նախատեսվում է իրականացնել անհրաժեշտ հետազոտություններ էլեկտրաէներգիայի տարբեր լարման սակագների միջև ծախսերի և ներդրումների բաշխման սկզբունքների և համապատասխան մեթոդաբանության մշակման և, դրան փոխկապակցված՝ բաշխման ցանցի մարժայի սահմանված մեծությունների հաշվարկի մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ: Կուսումնասիրվի նաև սպառողական առանձին խմբերի համար երկդրույք սակագնային համակարգի (հզորության վճար և էլեկտրաէներգիայի դրույք) կիրառման հարցը, ինչպես նաև գիշերային և ցերեկային սակագների

արդյունավետությունը՝ ինչպես դրանց մեծությունների, այնպես և կիրառման ժամերի տեսանկյունից:

Հանձնաժողովը 2017 թվականի ընթացքում կշարունակի էներգետիկայի բնագավառում էներգետիկ հաշվեկշիռների, կարգավորվող ընկերությունների կողմից լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ ծախսերի ու պարտավորությունների, իրականացված ներդրումների և սակագների վրա ազդող մի շարք այլ գործոնների վերլուծության և, ըստ անհրաժեշտության, սակագների վերանայման աշխատանքները:

Հաշվի առնելով դրամի փոխարժեքի տատանումները և սղաճի փոփոխությունները, մինչև 2017 թվականի հունիսի 1-ը սահմանված կարգով կճշգրտվեն փոքր հիդրոէլեկտրակայաններից և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները: Այս գործընթացը կրում է պարբերական բնույթ և իրականացվում է յուրաքանչյուր տարի:

Ինչպես յուրաքանչյուր տարի, այնպես և 2017 թվականին կուսումնասիրվեն և կհաստատվեն էլեկտրական էներգիա արտադրող խոշոր կայանների կողմից հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացվող պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունների չափաքանակները:

Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանմամբ «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերը և այլ գույքը դիտարկվում են որպես միասնական գույքային համալիր, որի օգտագործումն ու պահպանումը 2017 թվականից իրականացվելու է մեկ կառավարչի կողմից՝ 15 տարի ժամկետով վարձակալության տրամադրելու միջոցով: Նշված գույքի օգտագործման իրավունքը վարձակալության փոխանցելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը կազմակերպել է միջազգային մրցույթ, որի արդյունքում հաղթող ճանաչված ընկերությանը հանձնաժողովը կտրամադրի խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա՝ դրա պայմաններում ամրագրելով նաև

մրցույթի արդյունքում ձևավորված ծառայությունների մատուցման բազիսային սակագները և դրանց ճշգրտման մեխանիզմները: Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման բազիսային սակագները վարձակալության 1-ին պայմանագրային տարվա համար նույնությամբ կսահմանվեն որպես սպառողներին ծառայությունների մատուցման սակագներ, իսկ 2-րդ պայմանագրային տարվանից սկսած՝ յուրաքանչյուր տարի կենթարկվեն ճշգրտման մանրածախ ջրամատակարարման ծավալի, էլեկտրաէներգիայի սակագների փոփոխություններով և տարեկան սղաճով պայմանավորված:

«ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող սակագնային կարգավորման ենթակա ծառայությունների համար սահմանված սակագնային փաթեթներն ընդլայնելու և բաժանորդներին իրենց կարիքներին համապատասխան սակագնային փաթեթներ ընտրելու հնարավորություն ընձեռելու նպատակով, ըստ անհրաժեշտության, կսահմանվեն սակագնային կարգավորման ենթակա ծառայությունների այլընտրանքային սակագնային փաթեթներ:

Հանձնաժողովը նախատեսում է 2017 թվականին իրականացնել նաև «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության անհրաժեշտ հասույթի վերլուծություն, ուսումնասիրել էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների շուկաներում տեղի ունեցող զարգացումները և անհրաժեշտության դեպքում վերանայել «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ կիրառվող սակագնային քաղաքականությունը և սակագնային կարգավորման ենթակա ծառայությունների ցանկը:

3. Լիցենզավորում

Լիցենզավորման գործառույթը հանձնաժողովին հնարավորություն է տալիս մրցակցության բացակայության կամ սահմանափակ մրցակցության պայմաններում կարգավորվող բնագավառներում գործունեություն իրականացնող ընկերությունների համար գործունեության միասնական չափանիշների սահմանման միջոցով հավասարակշռել սպառողների և այդ ընկերությունների օրինական շահերը, կարգավորման դաշտում գործող տարբեր ընկերությունների համար վարել

միատեսակ քաղաքականություն, ինչպես նաև իրականացնել լիցենզավորված անձանց տրամադրված լիցենզիայի պայմանների վերահսկում, դրանց չկատարման դեպքում լիցենզավորված անձանց նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ:

Ելնելով նշվածից՝ հանձնաժողովը 2017 թվականին կշարունակի լիցենզավորման գործընթացը՝ որպես կարգավորման կարևորագույն գործիքի կիրառում, միաժամանակ հետամուտ լինելով նշված գործընթացին բնորոշ գործիքակազմի հետևողական կատարելագործմանը և արդյունավետության բարձրացմանը:

2017 թվականին, ի թիվս կարգավորվող ոլորտում իրականացվող լիցենզավորման գործառույթի, նախատեսվում է՝

- գործողության մեջ մտցնել «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների սպասարկման տարածքներում գործունեություն իրականացնող միասնական ջրամատակարար ընկերությանը տրամադրված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիան և ապահովել ջրամատակարար ընկերության բնականոն գործունեության համար անհրաժեշտ կարգավորման գործառույթների իրականացումը.

- «Գազ էլեկտրաէներգիայի դիմաց» ծրագրի իրականացման համար, համապատասխան հայտի հիման վրա, երկարաձգել «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված՝ Իրանի Իսլամական Հանրապետությունից բնական գազի ներկրման և Իրանի Իսլամական Հանրապետություն էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման լիցենզիաների գործողության ժամկետները.

- համապատասխան հայտի հիման վրա երկարաձգել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված՝ Հայաստանի և Վրաստանի էներգահամակարգերի վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակների ժամանակ

Վրաստանի Հանրապետությունից էլեկտրական էներգիայի (հզորության) ներկրման և Վրաստանի Հանրապետություն էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման լիցենզիաների գործողության ժամկետները:

Հայաստանի Հանրապետության կառավարության և «Գրեյնջ Փաուեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության և «ՌԵՆԿՈ» ընկերության միջև ստորագրվել են համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի և Լոռու մարզի Վանաձոր քաղաքի մոտակայքերում յուրաքանչյուրը 234 ՄՎտ հզորությամբ համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրաէներգիա արտադրող երկու նոր էլեկտրակայանների կառուցման և շահագործման վերաբերյալ փոխըմբռնման հուշագրեր: Նշված էլեկտրակայանների կառուցման վերաբերյալ վերջնական պայմանագրեր կնքվելու դեպքում, համապատասխան հայտերի հիման վրա, հանձնաժողովի կողմից կտրամադրվեն համակցված շոգեգազային ցիկլով կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիաներ:

Հենվելով 2016 թվականի տվյալների վրա, համաձայն որոնց՝ հանձնաժողովի կողմից իրականացվել է էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց միջև կնքված, ինչպես նաև էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման և արտահանման 209 պայմանագրերի իրավական փորձաքննություն և գրանցում, հանձնաժողովը 2017 թվականին ևս կշարունակի ապահովել նշված գործընթացի պատշաճ իրականացումը:

4. Սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված աշխատանքներ

4.1 Սպառողների սպասարկման որակի ցուցանիշների մոնիթորինգ

Կարգավորվող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի սահմանված ցուցանիշների ապահովման գործընթացը մշտապես գտնվում է հանձնաժողովի ուշադրության կենտրոնում՝ ինչպես կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող տեղեկատվությունների վերլուծության,

այնպես և տեղում իրականացվող ուսումնասիրությունների միջոցով: Այս գործիքակազմի կիրառմամբ հանձնաժողովը մշտապես բարձրացնում է իրականացվող մոնիթորինգի արդյունավետությունը: Հանձնաժողովն էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերություններից սպառողների սպասարկման որակի փաստացի ցուցանիշների վերաբերյալ եռամսյակային պարբերականությամբ ստացված տեղեկատվության, ինչպես նաև սպառողների կողմից հանձնաժողով ուղղված դիմում–բողոքների բնույթի և բովանդակության ուսումնասիրության հիման վրա մշտական մոնիթորինգի է ենթարկում՝

- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների՝ սպառողների մատակարարման ընդհատումների քանակի և տևողության ցուցանիշները,
- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողների դիմումներին, բողոքներին և հարցադրումներին պատասխանելու ժամկետները,
- սպառողների մոտ թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության հաշվարկային ցուցանիշները,
- առևտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքում էլեկտրական էներգիա և բնական գազ մատակարարող ընկերությունների կողմից կատարված վերահաշվարկները և հաշվարկված տույժերը,
- նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացում սահմանված ժամկետների խախտումները և դրանց պատճառները:

Սպառողների սպասարկման որակի սահմանված ցուցանիշներից շեղումների դեպքում մատակարար ընկերությունների հետ պարբերաբար իրականացվել և իրականացվում են առկա խնդիրների կարգավորմանն ուղղված քննարկումներ, մշակվում են միջոցառումներ՝ նման խախտումները հետագայում բացառելու նպատակով: Հարկ է նշել, որ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների

վերաբերյալ տեղեկատվությունը եռամսյակային կտրվածքով հրապարակվում է հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում (www.psrc.am): 2017 թվականի ընթացքում նախատեսվում են նաև ներկայացվող տեղեկատվության հավաստիության ուսումնասիրություններ:

Ընդհանուր առմամբ, 2016 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում գրավոր և էլեկտրոնային եղանակով հանձնաժողով է ներկայացվել 165 դիմում, որից 102-ը էլեկտրաէներգետիկական համակարգի վերաբերյալ, 44-ը՝ գազամատակարարման և 19-ը՝ ջրամատակարարման բնագավառի վերաբերյալ:

Մասնավորապես.

- Էլեկտրական էներգիայի մատակարարմանն առնչվող 102 դիմումներից 42-ը (41.8%) վերաբերում են վճարման հաշիվներին անհամաձայնությանը, 15-ը (14.7%)՝ էլեկտրամատակարարման ընդհատումներին, 12-ը (11.7%)՝ նոր սպառող գրանցվելու ընթացակարգին, 7-ը (6.8%)՝ էլեկտրաէներգիայի որակին, 6-ը (5.8%)՝ էլեկտրոնային հաշվիչների ժամային շեղումներին և 20-ը (19.6%)՝ այլ բնույթի,
- բնական գազի մատակարարմանն առնչվող 44 դիմումներից 4-ը (9%) վերաբերում են վճարման հաշիվներին անհամաձայնությանը, 25-ը (56.8%)՝ սպառված բնական գազի վերահաշվարկների անհամաձայնությանը, 6-ը (13.6%)՝ գազամատակարարման ընդհատումներին, 3-ը (6.8%)՝ ներտնային տեխնիկական սպասարկմանը և 6-ը (13.6%)՝ այլ բնույթի,
- խմելու ջրի մատակարարմանն առնչվող 19 դիմումներից 4-ը (21%) վերաբերում են վճարման հաշիվներին անհամաձայնությանը, 7-ը (36.8%)՝ ջրամատակարարման գրաֆիկների խախտմանը, 1-ը (5.2%)՝ մատակարարվող խմելու ջրի ճնշմանը, 5-ը (26.3%)՝ ջրամատակարարման ցանցերի և կոյուղագծերի տեխնիկական վիճակին և 2-ը (10.5%)՝ այլ բնույթի:

Ներկայացված դիմումներից 59-ը ամբողջությամբ բավարարվել են, 106-ը՝ ստացել համապատասխան պարզաբանում:

2017 թվականի ընթացքում հանձնաժողովը կամփոփի սպառողներից ստացված դիմում-բողոքները և համապատասխան քայլեր կձեռնարկի առաջնահերթ

խնդիրներին լուծումներ տալու ուղղությամբ:

4.1.1 Էներգետիկայի բնագավառ

2016 թվականին կրկին անդրադարձ է կատարվել «Գազպրոմ Արմենիա» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության ձևերի լրամշակմանը: Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների համաձայն՝ բաժանորդների գազամատակարարման ընդհատումների քանակը տարեկան կտրվածքով չպետք է գերազանցի 4 անգամը, իսկ յուրաքանչյուր ընդհատման առավելագույն տևողությունը՝ 36 ժամը: «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունում 2016 թվականի հոկտեմբերի 1-ից ներդրվել է տեղեկատվական ձև, որը կներառի բաժանորդների տարեկան կտրվածքով ընդհատումների քանակը: Արդյունքում, 2017 թվականի հունվարի 1-ից ևս մեկ քայլով կբարձրանա տարեկան կտրվածքով բաժանորդների գազամատակարարման ընդհատումների քանակի վերահսկելիության աստիճանը:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության համար նույնպես ներդրվել են նոր տեղեկատվական ձևեր, որոնց արդյունքում ինչպես հանձնաժողովը, այնպես և մատակարար ընկերությունը հնարավորություն կունենան նախօրոք թիրախավորել այն աշխատանքները, որոնք ներդրումային ծրագրերում ընդգրկվելուց հետո կնպաստեն սպառողների սպասարկման որակի բարձրացմանը, ինչպես արտապլանային ընդհատումների, այնպես և լարման շեղումների քանակի և տևողության նվազեցման ուղղությամբ:

2017 թվականին կշարունակվի էլեկտրական էներգիայի ու բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների լրամշակման գործընթացը: Մասնավորապես, էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների լրամշակման արդյունքում 2017 թվականի ապրիլի 1-ից 15 օրով կկրճատվեն 0.4կՎ լարմամբ 30կՎԱ-ից բարձր հզորությամբ և 6(10) կՎ լարմամբ էլեկտրական ցանցին միացման ժամկետները: Միևնույն ժամանակ, նոր սպառողներին միացման պայմանգիր կնքելու առաջարկ ներկայացնելու

առավելագույն ժամկետը, որը տատանվում էր 10-ից մինչև 75 օրվա միջակայքում՝ հաշվի առնելով լարման մակարդակները, սահմանվել է 5 աշխատանքային օր՝ անհրաժեշտ նախագծային և նախահաշվային փաստաթղթերի, տեխնիկական նկարագրի մշակման աշխատանքները, պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ անձանց հետ անհրաժեշտ համաձայնեցումների իրականացումը տեղափոխելով երկրորդ փուլ՝ նոր սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման պայմանագիր կնքելուց հետո:

Նախատեսվում է նաև սպասարկման որակի խախտման դեպքերում ավելացնել մատակարարի կողմից սպառողին վճարվող տույժի չափը՝ 2017 թվականի հունվարի 1-ից այն սահմանելով սպառված էլեկտրաէներգիայի միջին ամսական արժեքի 50 տոկոսի չափով (ներկայիս 20 տոկոսի փոխարեն), բայց ոչ ավելի, քան 2500 դրամը (ներկայիս 2000 դրամի փոխարեն):

2017 թվականին սպառողներից ստացված դիմում-բողոքների և մատակարարների ներկայացրած առաջարկությունների վերլուծությունների ամփոփման արդյունքները հաշվի կառնվեն էլեկտրական էներգիայի և բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների լրամշակման ընթացքում:

4.1.2 Ջրային ոլորտ

Հանձնաժողովն իր գործառույթների տիրույթում հետևողական քայլեր է ձեռնարկում խմելու ջրի մատակարարման ոլորտում գործող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի պայմանների մոնիթորինգի իրականացման ուղղությամբ:

Շարունակական բնույթ են կրում խմելու ջուր մատակարարող ընկերություններին ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների առավել հստակեցման ուղղությամբ տարվող աշխատանքները: Մասնավորապես, յուրաքանչյուր տարի «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունները հանձնաժողով են ներկայացնում սպառողների ջրամատակարարման նվազագույն տևողության ցուցանիշները, որոնց

ուսումնասիրման արդյունքներից ելնելով՝ հանձնաժողովն ընկերությունների համար սահմանում է ջրամատակարարման նվազագույն տևողության նոր՝ բարելավված ցուցանիշներ: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս տարեցտարի բարելավել սպառողների ջրամատակարարման նվազագույն տևողությունները: Առավել մեծ ուշադրություն է դարձվում համեմատաբար քիչ տևողությամբ ջրամատակարարում ունեցող սպառողների ջրամատակարարման բարելավմանը:

Հանձնաժողովը, ելնելով մոնիթորինգի աշխատանքների բարելավման անհրաժեշտությունից, մինչև 2016 թվականի ավարտը կլրամշակի հանձնաժողով ներկայացվող տեղեկատվությունների ձևերը, որոնք գործողության մեջ կմտնեն 2017 թվականից:

4.2 Սպառողների դիմումների քննարկում

Հանձնաժողովի գործունեության կարևոր ուղղություններից է սպառողների դիմումների քննարկման գործընթացը: Կազմակերպությունների (նաև սպառողների շահերը պաշտպանող) և անհատների կողմից հանձնաժողով են ներկայացվում հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում ծառայությունների մատուցմանն առնչվող տարաբնույթ գրավոր և բանավոր դիմումներ ու տեղեկատվություն ստանալու հարցումներ: Դիմումները քննարկվում են, օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում յուրաքանչյուրին տրվում է համապատասխան լուծում կամ պարզաբանում: Հանձնաժողովում գործող թեժ գծի հեռախոսահամարով տրվում է նաև խորհրդատվություն մատակարար-սպառող հարաբերություններում դիմումատուի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվում են դիմումների քննարկման գործընթացի վերաբերյալ տարեկան հաշվետվությունը (մինչև հաջորդ տարվա առաջին եռամսյակի ավարտը) և Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների կայունության զարգացման աջակցություն» ծրագրի շրջանակում խմելու ջրի մատակարարման և

ջրահեռացման ծառայությունների մատուցման վերաբերյալ դիմումների քննարկման գործընթացի մասին տարեկան տեղեկատվությունը (մինչև հաջորդ տարվա մայիսի 31-ը):

Էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից հանձնաժողով է ներկայացվում սպառողների դիմումների վերաբերյալ տեղեկատվություն, որը, որպես սպառողների սպասարկման որակի ցուցանիշների բաղադրիչ, սահմանված կարգով քննարկվում և մշտապես վերահսկվում է հանձնաժողովի կողմից: Վերահսկողությունն իրականացվում է ինչպես եռամսյակային կտրվածքով ներկայացվող հաշվետվությունների վերլուծության և ընտրանքային կարգով տեղերում իրականացվող ստուգումների, այնպես և կարգավորվող ընկերություններում դիմումների քննարկման ընթացակարգերի հրապարակայնացման (ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում, սպասարկման գրասենյակներում տեղադրում և այլն) միջոցով:

Վերլուծության արդյունքներն ամփոփելուց հետո, հանրությանն իրազեկելու նպատակով, ընկերությունների ներկայացրած տեղեկատվությունը եռամսյակային արդյունքներով հրապարակվում է հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Դիմում-բողոքների քննարկման գործընթացն առավել թափանցիկ և սպառողների կողմից վերահսկելի դարձնելու նպատակով հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում գործում է առցանց էլեկտրոնային համակարգ, որտեղ դիմումատուն կարող է հետևել իր դիմումի քննարկման ընթացքին:

Վերը նշված գործառույթները, ինչպես նաև դիմումի առարկայի ծագման իրավական կամ կազմակերպական պատճառների վերլուծության արդյունքում գործող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործումը, իր իրավունքներին և պարտականություններին դիմումատուի իրազեկվածության բարձրացման աշխատանքները շարունակական են և 2017 թվականին նույնպես գտնվելու են հանձնաժողովի մշտական ուշադրության կենտրոնում:

5. Կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերի համաձայնեցում և գնումների մոնիթորինգ

Հանձնաժողովի գործառույթներից իր կարևորությամբ առանձնանում է էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրության և համաձայնեցման գործընթացը, այդ թվում՝ ընկերությունների ներդրումային գործունեության արդյունքների վերաբերյալ համապատասխան վերլուծական տեղեկանքների կազմումն ու հրապարակումը: Նշված աշխատանքների իրականացումը կարևորվում է սակագներում ներառման ենթակա ներդրումների օգտակար և օգտագործվող ծավալի որոշման, ներդրումների արդյունավետության գնահատման, այդ համատեքստում անարդյունավետ և ոչ հիմնավոր ներդրումների ծավալի բացահայտման և վերհանման առումով՝ սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի և բնական գազի սակագներում դրանք չներառելու սկզբունքից ելնելով: Այդ նպատակով հանձնաժողովը յուրաքանչյուր տարի քննարկում և համաձայնություն է տալիս էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների հաջորդ տարիների ներդրումային ծրագրերին, ինչպես նաև ամփոփում է նույն ընկերությունների նախորդ տարվա ներդրումային գործունեության արդյունքները և հրապարակում համապատասխան վերլուծական տեղեկանքներ:

Ներկայում էներգետիկայի բնագավառում հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրեր են իրականացնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Հայկական ատոմային էլեկտրակայան», «Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունները:

2017 թվականին հանձնաժողովը կքննարկի «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա» և «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությունների ներդրումային ծրագրերը, ինչպես նաև կամփոփի վերջիններիս, ինչպես նաև «Հայկական ատոմային էլեկտրակայան» և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունների 2016 թվականի

ներդրումային գործունեության արդյունքները: Մասնավորապես, «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրը միտված է Սևան-Հրազդանյան ՀԷԿ-երի կասկադի արդիականացմանը, հիդրոկառույցների վերականգնմանը և հետագա շահագործման համար ոչ պիտանի սարքավորումների փոխարինմանը, «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունների ներդրումային ծրագրերը՝ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը, նոր սպառողների սպառման համակարգերի միացմանը, առևտրային հաշվառման համակարգերի կատարելագործմանը, հետագա շահագործման համար ոչ պիտանի սարքավորումների փոխարինմանը, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրմանը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրը միտված է կայանի անվտանգության և հուսալիության մակարդակի բարձրացմանը և հիմնական միջոցների փոխարինմանը, իսկ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրը՝ Զովունի ենթակայանի վերակառուցմանը: Միևնույն ժամանակ, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը վարկային միջոցներով մի շարք ներդրումային ծրագրեր է իրականացնում Հայաստանի և Վրաստանի էներգահամակարգերի միջև ասինքրոն միացման ապահովման ուղղությամբ, որի արդյունքում Հայաստանի Հանրապետության էներգահամակարգը Իրանի Իսլամական Հանրապետության էներգահամակարգից բացի (Իրան-Հայաստան 400կՎ երրորդ օդային գծի կառուցումից հետո) կկապվի նաև Վրաստանի Հանրապետության և տարածաշրջանի մյուս երկրների հետ:

Հանձնաժողովն առանձնակի ուշադրություն է դարձնում էլեկտրական էներգիայի և բնական գազի բաշխման գործունեություն իրականացնող ընկերությունների ներդրումային ծրագրերի կառուցվածքին՝ ներդրումներն առաջնահերթ առավել վատթար վիճակում գտնվող բնակավայրերի սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանն ուղղելու նպատակով: Անհատապես ուսումնասիրվում է սպառողների կողմից սպասարկման որակի ցուցանիշներին (ընդհատումներ, էլեկտրական

էներգիայի լարման թույլատրելի սահմաններից շեղումներ) վերաբերող յուրաքանչյուր բողոք, և բարձրացված հարցի լուծման ուղղությամբ հասցեական աշխատանքները ներառվում են ընկերությունների ներդրումային ծրագրերում:

Հանձնաժողովն ինչպես նախկինում, այնպես և 2017 թվականին, հետևողական է լինելու իր կարգավորման դաշտում գործող հանրային կազմակերպությունների կողմից իրականացվող գնումների արդյունավետության ու թափանցիկության ապահովման հարցում՝ սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի և բնական գազի սակագների վրա ազդեցության առումով: Վերջիններիս կողմից գնումների գործընթացի թափանցիկության ապահովման վերաբերյալ ողջ տեղեկատվությունը հրապարակվում է ինչպես Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գնումների էլեկտրոնային տեղեկագրում, այնպես և ընկերությունների պաշտոնական ինտերնետային կայքերում:

Գնումների գործընթացի արդյունավետության բարձրացման և թափանցիկության ապահովման նպատակով հանձնաժողովը սահմանել է իր հաստատած ցանկում ներառված հանրային կազմակերպությունների գնումների կարգերին ներկայացվող միասնական լրացուցիչ պահանջներ, ինչպես նաև այդ կազմակերպությունների գնումների գործընթացի մոնիթորինգի կարգ, որում ամրագրված են մոնիթորինգի մեխանիզմները և գործիքները, իրականացման և արդյունքների հրապարակման պարբերականությունն ու ձևաչափը:

Գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների սահմանման, ինչպես նաև հետագա մոնիթորինգի ենթակա հանրային կազմակերպությունների ցանկերում ներառված են հանրային ծառայությունների կարգավորման ոլորտում գործունեություն իրականացնող մասնավոր բաժնեմաս ունեցող այն ընկերությունները, որոնց կողմից իրականացվող գնումների արդյունավետությունը կարող է ազդեցություն ունենալ սպառողներին առաքվող էլեկտրական էներգայի և բնական գազի սակագների վրա, ինչպես, օրինակ, «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունները, «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, «Հրազդանի էներգետիկ

կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերությունը, ինչպես նաև հեռահաղորդակցության բնագավառում գործունեություն իրականացնող «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությունը (միայն հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված ցանցի մասով): Նշված ցանկում չեն ներառվել 50 տոկոսից ավելի պետական բաժնեմաս ունեցող հանրային կազմակերպությունները, քանի որ նրանց կողմից իրականացվող գնումների գործընթացը կարգավորվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

2017 թվականի ընթացքում հանձնաժողովը, համաձայն հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգի՝ հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող անձանց կարիքներին համապատասխան ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների քանակի և ժամանակացույցի գնահատման նպատակով կշարունակի իրականացնել նշված անձանց կողմից հրապարակվող գնումների պլանների մոնիթորինգ, որի արդյունքները կհրապարակվեն հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում: Նույն ժամանակահատվածում կիրականացվի նաև հանրային կազմակերպությունների գնումների առանձին գործարքների մոնիթորինգ, որը ներառում է հանրային կազմակերպությունների կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրությունների, գործարքների համար կիրառվող գնման մեթոդների ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարների ընտրության ընթացակարգերի մոնիթորինգը: Հանրային կազմակերպությունների գնումների առանձին գործարքների մոնիթորինգի արդյունքները հրապարակված են հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Հանձնաժողովը, 2017 թվականին համագործակցելով բոլոր շահագրգիռ կողմերի և միջազգային կազմակերպությունների հետ, կշարունակի աշխատանքները հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող անձանց կողմից փաստացի կատարված գնումների արդյունավետության ու թափանցիկության բարձրացման ուղղությամբ՝ կիրառելով նաև արդեն իսկ ներդրված մոնիթորինգի մեխանիզմները:

6. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն

Կարգավորվող ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզիայի պայմանների վերահսկման համար: Այդ առումով կարևորվում է կարգավորվող ոլորտների ընկերություններում հաշվապահական հաշվառման հաշիվների և ենթահաշիվների համակարգի ներդրումը, որը հնարավորություն է ընձեռում հստակ տարանջատել հիմնական (կարգավորվող) և ոչ հիմնական գործունեության եկամուտներն ու ծախսերը, կատարել եկամուտների և ծախսերի մանրամասն հաշվառում և վերլուծություն:

Ելնելով այն հանգամանքից, որ էլեկտրաէներգետիկական համակարգում ընդգրկված են ֆունկցիոնալ տարբեր բնույթի գործունեություն իրականացնող ընկերություններ, հանձնաժողովն էլեկտրաէներգետիկական համակարգի կարգավորվող ընկերությունների համար մշակել է հաշվապահական հաշվառման անհատական հաշվային պլաններ, որոնց հիման վրա 2017 թվականին կտարվեն աշխատանքներ ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների անհատական ձևեր սահմանելու ուղղությամբ:

Այս ձեռնարկումը հանձնաժողովին հնարավորություն կտա կարգավորվող յուրաքանչյուր ընկերությունից ստանալ առավել մանրամասն և հասցեական տեղեկատվություն, արագ և դինամիկ կերպով արձագանքել կարգավորվող ոլորտներում ընկերությունների կազմակերպաիրավական կառուցվածքների, նրանց գործառույթների շրջանակի, ինչպես նաև տնտեսական դաշտում օրենսդրական փոփոխություններին և կատարել համարժեք փոփոխություններ:

Առաքված էլեկտրաէներգիայի և մատուցված ծառայությունների դիմաց էլեկտրաէներգետիկական համակարգի արտադրող կայաններին և ծառայություններ մատուցող ընկերություններին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սահմանված կարգով և ժամկետներում

վճարումների ապահովման նպատակով 2017 թվականին հանձնաժողովը կշարունակի վերահսկել սպառված էլեկտրաէներգիայի դիմաց սպառողներից գումարների հավաքագրման և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից ընկերություններին վճարումների կատարման ընթացքը:

2017 թվականի ընթացքում հանձնաժողովը սահմանված կարգով հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող ընկերություններից կստանա ֆինանսական հաշվետվություններ և կկատարի համապատասխան վերլուծություններ:

Էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման և ջրային համակարգերի գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով հանձնաժողովը կշարունակի իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները:

7. Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառ

Հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականության գերակայությունները՝ հանձնաժողովը 2017 թվականի ընթացքում շարունակելու է աշխատանքներ իրականացնել էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի դինամիկ և համաչափ զարգացման, մրցակցության խթանման, գործարար և ներդրումային միջավայրի բարելավման, բաժանորդների իրավունքների և շահերի պաշտպանության, էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության ապահովման, ինչպես նաև ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ: Մասնավորապես.

Հայաստանի Հանրապետության մարզերում CDMA անլար տեխնոլոգիայի հիման վրա գործող հեռախոսակապի արդիականացման՝ «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության լիցենզիոն պարտավորության կատարման շրջանակում, հանձնաժողովի որոշումների համաձայն, ընկերությունը պետք է մինչև 2017 թվականի սեպտեմբերի 1-ը 455 բնակավայրերում անլար տեխնոլոգիայի կիրառմամբ

արդիականացնի CDMA հեռախոսակապը, ինչը հնարավորություն կընձեռի այդ բնակավայրերում ստանալ ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություններ:

Միաժամանակ, «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված ցանցի ենթակառուցվածքների զարգացման վերաբերյալ հանձնաժողովի որոշման համաձայն՝ սահմանվել է ընկերության օպտիկամանրաթելային կապուղիների հասանելիության ապահովման ենթակա բնակավայրերի ցանկն ու եռամյա ժամկետում աշխատանքների իրականացման ժամանակացույցը, որոնց կատարման արդյունքում մինչև 2018 թվականի հունիսի 1-ը ընկերության կողմից օպտիկամանրաթելային կապուղիների հասանելիությամբ կապահովվեն Հայաստանի Հանրապետության 40 բնակավայրեր: Ընդ որում, մինչև 2017 թվականի հունիսի 1-ը ընկերության կողմից օպտիկամանրաթելային կապուղիների հասանելիությամբ կապահովվեն 28 բնակավայրեր: Նշված աշխատանքների կատարման արդյունքում 2018 թվականի հունիսի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության բոլոր համայնքներն ապահովված կլինեն ամրակցված հեռախոսակապով և լայնաշերտ ինտերնետ հասանելիությամբ:

Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության ապահովման և ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունքում Հայաստանի Հանրապետության բոլոր համայնքները ապահովված են առնվազն մեկ օպերատորի հանրային շարժական կապի 3G տեխնոլոգիայի ծածկույթով, իսկ Երևան, Գյումրի, Վանաձոր, Դիլիջան, Ծաղկաձոր, Էջմիածին, Արմավիր և Ջերմուկ քաղաքներում հասանելի է նաև 4G/LTE տեխնոլոգիայի վրա հիմնված շարժական կապի ցանցը: Հանձնաժողովը նախատեսում է 2017 թվականի ընթացքում շարունակել աշխատանքները Հայաստանի Հանրապետության տարածքում շարժական կապի լայնաշերտ տեխնոլոգիաների (3G, 4G/LTE) վրա հիմնված ցանցերի ընդլայնման ուղղությամբ:

Հանձնաժողովի կողմից «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» և «ՅՈՒՔՈՄ» ընկերությունների նկատմամբ սահմանված պարտավորությունների համաձայն՝ վերջիններս 2017

թվականի ընթացքում հանրային ամրակցված հեռախոսային ծառայություններ կգործարկեն համապատասխանաբար 18 և 10 բնակավայրերում: Նշված բնակավայրերում ամրակցված կապի ցանցերի և հեռախոսակապի ծառայությունների մատուցման նպատակով հանձնաժողովը կիրականացնի ընկերությունների պարտավորությունների կատարման ուսումնասիրություններ և անհրաժեշտության դեպքում միջոցներ կձեռնարկի ցանցերի հետագա զարգացման և բնականոն փոխգործակցության ապահովման համար:

Հանձնաժողովի որոշումների համաձայն՝ օպերատորներն իրենց գործառնական գրասենյակներում և ինտերնետային կայքերում կհրապարակեն Հայաստանի Հանրապետության բնակավայրերում մատուցվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական և ամրակցված կապի ծառայությունների հասանելիության և կիրառվող տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվությունը:

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառը հանդիսանում է տնտեսության դինամիկ զարգացող ճյուղ, ուստի հանձնաժողովը նոր տեխնոլոգիաների և ծառայությունների ներդրման համատեքստում մշտապես հետևում է բնագավառի միջազգային զարգացման միտումներին՝ կարգավորման գործընթացը վերջիններիս առավել համահունչ դարձնելու նպատակով:

8. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության, թափանցիկության ապահովումը և համագործակցությունը զանգվածային լրատվության միջոցների ու հասարակական կազմակերպությունների հետ

Հանձնաժողովը, օրենքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում, հրավիրված դռնբաց նիստերի ընթացքում ընդունում է որոշումներ, որոնց կատարումը պարտադիր է կարգավորվող ընկերությունների համար: 2017 թվականի ընթացքում, հավատարիմ իր հրապարակային և թափանցիկ գործելաոճին, ինչպես նաև նպատակ ունենալով հանրությանը հնարավորինս ներգրավել հանրային ծառայությունների կարգավորման գործընթացում, հանձնաժողովն իր պաշտոնական ինտերնետային կայքում շարունակաբար կհրապարակի մանրամասն տեղեկատվություն նիստերում քննարկվող հարցերի վերաբերյալ:

Կարևորելով զանգվածային լրատվության միջոցների հետ

համագործակցությունը՝ հանձնաժողովը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում նրանց կողմից բարձրացված հարցերը: Ինչպես յուրաքանչյուր տարի, այնպես և 2017 թվականին, հանձնաժողովը սահմանված ժամկետներում պարզաբանումներ կտրամադրի զանգվածային լրատվության միջոցների գրավոր և բանավոր հարցադրումներին, կապահովի նրանց մասնակցությունը հանձնաժողովի նիստերին և հանրային քննարկումներին, որը կնպաստի կարգավորող մարմնի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և սպառողների իրազեկվածության աստիճանի բարձրացմանը:

Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքը, որը թարմացվում է շաբաթական առնվազն երկու անգամ, զանգվածային լրատվամիջոցներին, սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպություններին և ցանկացած շահագրգիռ անձի հնարավորություն է ընձեռում տեղեկանալ հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման գործընթացին, ծանոթանալ հանձնաժողովի գործունեությանը, ստանալ ծառայությունների սպասարկման որակի և սպառողների իրավունքների վերաբերյալ սպառիչ տեղեկատվություն:

Կարևորելով սպառողների հետ աշխատանքը՝ հանձնաժողովը 2017 թվականին կշարունակի հանրային հնչեղություն ունեցող, մասնավորապես, սակագների ձևավորմանը, փոփոխությանը և սպառողների իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերի շուրջ սերտ համագործակցությունը սպառողների իրավունքները պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ, ինչի արդյունքում ևս բարձրանում է հանրության իրազեկվածության մակարդակը:

Հաշվի առնելով հանրության առջև հաշվետու լինելու օրենքի պահանջը, ինչպես յուրաքանչյուր տարի, այնպես և 2017 թվականին հանձնաժողովն իր պաշտոնական ինտերնետային կայքում և տպագիր մամուլում կհրապարակի նախորդ տարվա իր գործունեության հաշվետվությունը:

2017 թվականին հանձնաժողովի անդամները և աշխատակազմի մասնագետները հանրային հնչեղություն ունեցող խնդիրների շուրջ պարբերաբար հանդես կգան ճանաչողական բնույթի հաղորդումներով, պարզաբանումներով և հարցազրույցներով: Կշարունակվի մամուլի հրապարակումների ամենօրյա

վերլուծությունը: Հանձնաժողովի և կարգավորվող ոլորտների գործունեության մասին հրապարակումները կներկայացվեն աշխատակազմին՝ դիտարկելի դարձնելով ծառայություններ մատուցող ընկերությունների և հանրության կարծիքն ու գնահատականը:

9. Համագործակցությունը միջազգային կառույցների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կարգավորող մարմնի հետ

Հանձաժողովը մշտապես համագործակցում է միջազգային կազմակերպությունների և այլ երկրների կարգավորող մարմինների հետ:

Մասնավորապես, հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում միջազգային լավագույն փորձն ուսումնասիրելու և Հայաստանի Հանրապետությունում այն կիրառելու կամ կիրառման հնարավորությունները դիտարկելու նպատակով հանձնաժողովը համագործակցում է Համաշխարհային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Ասիական զարգացման բանկի, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID), ԱՄՆ կարգավորող հանձնաժողովների ասոցիացիայի (NARUC), Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU), ԵՄ Արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցության կարգավորող մարմինների խմբի (EaPeReg), Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային ընկերակցության (ERRA) և Ջրային համակարգի միջազգային ասոցիացիայի (IWA) հետ: 2017 թվականին ևս նախատեսվում է շարունակել համագործակցությունը նշված կառույցների հետ, մասնակցել Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային ընկերակցության (ERRA) և ԵՄ Արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցության կարգավորող մարմինների խմբի (EaPeReg) հերթական հանդիպումներին և նիստերին, Համաշխարհային բանկի և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից կազմակերպվող սեմինարներին:

Արդյունավետ համագործակցություն է իրականացվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի հետ, որը կշարունակվի նաև 2017 թվականի

ընթացքում: Մասնավորապես, երկու կարգավորող հանձնաժողովների համատեղ աշխատանքային ծրագրի շրջանակում կիրականացվեն համապատասխան օրենքների և կանոնների նախագծերի մշակման, լրամշակման, ոլորտների մասնագետների փորձի փոխանակման, ինչպես նաև նախանշված քննարկումներին և այլ միջոցառումներին մասնակցության աշխատանքներ՝ ճյուղային և ֆունկցիոնալ բոլոր ուղղություններով:

10. Հանձնաժողովի կողմից բյուջետային մուտքերի ապահովումը

2017 թվականին հանձնաժողովի վերահսկողության ներքո կգտնվի կարգավորվող ընկերությունների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մուտքերի ապահովման գործընթացը՝ լիցենզիաների (թույլտվությունների) տուրքերի, ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման վճարների, կարգավորման պարտադիր վճարների, ինչպես նաև փոքր հիդրոէլեկտրակայանները լիցենզիաներով ամրագրված ժամանակահատվածում չգործարկելու կամ լիցենզիայի պայմանները ոչ պատշաճ կատարելու համար գանձվող ֆինանսական երաշխիքների գծով վճարումների մասով: Ակնկալվում է, որ 2016 թվականին նշված աղբյուրներից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե կփոխանցվի շուրջ 7.0 մլրդ դրամ, որի հիմնական մասը՝ շուրջ 5.9 մլրդ դրամը, կկազմեն ռադիոհաճախականությունների օգտագործման և թույլտվությունների տրամադրման գծով մուտքերը: Ըստ կանխատեսումների՝ 2017 թվականին նշված աղբյուրներից պետական բյուջե կփոխանցվի շուրջ 7.2 մլրդ դրամ, որից ռադիոհաճախականությունների օգտագործման և թույլտվությունների տրամադրման գծով մուտքերը կկազմեն շուրջ 6.0 մլրդ դրամ:

11. Հանձնաժողովի 2017 թվականի պահպանման ծախսերի նախահաշիվը

Հանձնաժողովի 2017 թվականի գործունեության ծրագրի կատարումն ապահովելու նպատակով կարգավորող մարմնի այդ տարվա բյուջեն կձևավորվի

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն: Մասնավորապես, հանձնաժողովին հատկացվող պահպանման ծախսերի տարեկան մեծությունը ձևավորվում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ձևավորված հանձնաժողովի աշխատավարձի տարեկան ֆոնդը բազմապատկելով 1.7 գործակցով: Օրենքը սահմանում է, որ հանձնաժողովի պահպանման ծախսերի տարեկան մեծության և աշխատավարձի տարեկան ֆոնդի տարբերությունն ուղղվում է հանձնաժողովի պահպանման և կարողությունների զարգացման, հանձնաժողովի անդամների և աշխատողների նյութական խրախուսման և զարգացման, սոցիալական ծրագրերի իրականացման և այլ ֆոնդերին:

12. Հանձնաժողովի 2017 թվականի գործունեության ծրագրի հանրային քննարկումը

Հանձնաժողովի 2017 թվականի գործունեության ծրագրի նախագիծը հանրային քննարկման ներկայացնելու և ողջամիտ առաջարկությունները ծրագրում ներառելու նպատակով այն հրապարակվել է հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև համապատասխան գրություններով ուղարկվել հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող ընկերություններին և սպառողների շահերը ներկայացնող հասարակական կազմակերպություններին:

Ծրագրի նախագծի վերաբերյալ առաջարկություններ ներկայացրած կարգավորվող ընկերությունների և հասարակական կազմակերպությունների հետ կազմակերպվել են քննարկումներ և տրվել համապատասխան պարզաբանումներ, իսկ մի շարք առաջարկություններ ներառվել են ծրագրում:

Հանձնաժողովի 2017 թվականի գործունեության ծրագրով նախատեսված աշխատանքները կներառվեն 2017 թվականի աշխատանքային ծրագրում, որը կհաստատվի մինչև 2016 թվականի տարեվերջ և կհրապարակվի հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում: